ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

«12» հունիս 2024 թ.

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 90043800031

ՈՐՈՇՈՒՄ

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ* ծածկագրով պայմանագիրը միակողմ և մասնակի լուծելու մասին.

ՊԱՐԶԵՑԻ

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման պայմանագիր *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ* ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների՝ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն պետք է մատակարարի պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման–ժամանակացույցով նախատեսված ապրանքները, մասնավորապես, կոշիկի քսուք,հեղուկ օճառ/լվացվելու/,տակդիր,շամպուն,ախտահանիչ, մաքրող միջոց լվացարանների և լոգարանների համար, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես՝ պայմանագրի առարկան՝1.1կետը/:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ–ի պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվել են հայտեր, արձանագրություններ և դրանցով սահմանվել են ժամկետներ՝ տեխնիկական բնութագրով սահմանված տակդիրը մատակարարելու վերաբերյալ:

01.03.2024թվականից մինչև 12.06.2024թվականը «Վաճառողը» «Գնորդին» տակդիրը մատակարարել է պայմանագրի էական պայմանի խախտմամբ, այն է՝

մատակարարել է տակդիրը ժամկետների խախտմամբ և հայտերով նախատեսված ու սահմանված քանակից էապես նվազ քանակով,իսկ տեխնիկական բնութագրով նախատեսված մյուս ապրանքները համաձայն հայտերի դեռևս շարունակվում են մատակարարվել:

Նույն պայմանագրի 8..9 կետի դրույթների համաձայն Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը:Վաճառողը,պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը,սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմված և ուղարկված հայտերի,արձանագրությունների համաձայն ապրնաքը/տակդիրը/մատակարարվել է պայմանագրով սահմանված էական պայմանների խախտմամբ.ինչպես նաև հիմք ընդունելով Ձեր դիմումները և ղեկավարվելով պայմանագրի էական պայմաններից.

ՈՐՈՇԵՅԻ

02.02.2024թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության/ի դեմս՝Ս.Մուրադյանի/ և «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական,սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման *«ԱՍՀՆ-ՊՈԱԿ ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-Խ»* ծածկագրով պայմանագիրը:

2/Օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել «Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ»-ին՝ պայմանագրի լուծման վերաբերյալ:

3/Կատարել մատակարարման պայմանագրով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՍՄԻԿ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
Էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
☎ 0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru